ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/100

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11896-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի 28.06.2018թ. թիվ 1.1/2809-18 գրության հիման վրա, 29.06.2018թ. թիվ 03/26-3/11896-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ռազովալո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ռազովալո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ռազովալո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.07.2018թ. գրությամբ հայտնել է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Ռազովալո» ՍՊԸ-ն 31.05.2018թ. և 06.06.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՋԲ-18/2», «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՋԲ-18/4» և «ՀՀ ԱՄ ԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգերին):

Ընթացակարգերի մի շարք չափաբաժինների մասով Ընտրությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները որոշել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը, Կոմիտեի կողմից տրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունն ունի 76 061 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալով պայմանավորված «Ռազովալո» ՍՊԸ-ն դիմել է Կոմիտեին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 31.05.2018թ. և 06.06.2018թ. (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոգրյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից «Ռազովալո» ՍՊԸ-ին 02.07.2018թ. տրվել է թիվ 833 և 834 տեղեկանքները, համաձայն

որի՝ Ընկերությունը 31.05.2018թ. և 06.06.2018թ. դրությամբ ունեցել է պետական տուրքի մասով 76 061 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ:

Վերը նշված պետական տուրքի գումարը առաջացել է քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիազենզիայի համար նախատեսված գումարը չվճարելու հետ կապված:

Վերոհիշյալով պայմանավորված, «Ռազովալո» ՍՊԸ-ն Ընկերությանը սպասարկող բանկի՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Կենտրոնի մասնաճյուղում 07.06.2018թ. թիվ 000019 վճարման հանձնարարականով 90005169249 գանձապետական հաշվեհամարին կատարել է 85 000 ՀՀ դրամի վճարում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընկերությունը նշել է, որ «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2», «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/4» և «ՀՀ ԱՄ ԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն թիվ 2.1 հավելվածներով՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները նշելիս, ընկերության տնօրեն Աղասի Ռազմիկի Մեսրոպյանի նույնականացման քարտի համարը նշել է համապատասխանաբար՝ 0112600751,

0212600751 և 1202600751: Առաջին երկու դեպքում Պատվիրատուն հանդիսացել է նույն մարմինը, և տվյալ անհամապատասխանությունը չի արձանագրվել:

Այնինչ անհրաժեշտ էր արձանագրել անհամապատասխանությունը և Ընկերությանը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն պետք է տրամադրեր մեկ աշխատանքային օր ժամանակ վերը նշված անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում, եթե Ընկերության կողմից չշտկվեր վերոնշյալ համապատասխանությունները, «Ռազովալո» ՍՊԸ-ն չէր ճանաչվի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, և որպես դրա հետևանք հարցում չէր իրականացվի Կոմիտե, որի արդյունքում նաև չէր արձանագրվի Ընկերության կողմից հարկային պարտավորություն ունենալու փաստը:

Բացի այդ, Ընկերությունը գտնում է, որ «Ռոզովալո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգերի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ, եթե Ընկերությունը պետական տուրքի մասով ունեցել է հարկային պարտավորություն, ապա այս պարագայում Ընկերությունը իրավունք չէր ունենա հայտ ներկայացնել և մասնակցել գնման ընթացակարգերին, որովհետև տվյալ պարագայում ընկերության լիցենզիան պետք է լիներ կասեցված պարտավորություններ ունենալու պատճառով: Սակայն Ընկերությունը վստահ լինելով, որ չունի որևէ ժամկետանց պարտավորություն հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին: Տվյալ պարագայում, եթե Ընկերությունն ունեցել է պետական տուրքի մասով հարկային պարտավորություն՝ քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիզենզիայի մասով, ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր մասնակցին, քանի որ վերջինս իրավունք չուներ մասնակցելու գնման ընթացակարգին:

Ի լրումն վերոնշյալ դիրքորոշման՝ Ընկերությունը 06.07.2018թ. ներկայացրած գրությամբ պնդել է վերոհիշյալ դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ եթե ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կիրառվեր ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը և Ընկերությանը հնարավորություն տրվեր շտկելու

անհամապատասխանությունը, ապա այս դեպքում նիստը կկասեցվեր, Ընկերությունը կկատարեր համապատասխան վճարումը, իսկ այնուհետև հավանական կլիներ, որ Կոմիտեի կողմից արդեն չէր արձանագրվի հարկային որևէ պարտավորություն, քանի որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում լիցենզիայի գործողության կասեցումը վերացած է համարվում լիցենզիայի տարեկան պետական տուրքերի, ինչպես նաև դրանց՝ վճարումը ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունները կատարելու օրվան հաջորդող օրվանից:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել վերոգրյալը և «Ռազովալո» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/100 ընթացակարգի շրջանակներում 04.07.2018թ. ժամը 10:30-ին և 06.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 06.07.2018թ. ժամը 10:50-ին ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.06.2018թ. թիվ 1.1/2809-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից վարչական շենքի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտեր էին ներկայացրել թվով 11 մասնակիցներ:

Ընթացակարգի արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից 07.06.2018թ. ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված

որոշմամբ «Ռազովալո» ՍՊԸ-ն հայտարարվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցմանն ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, ըստ որի՝ «Ռազովալո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.06.2018թ. ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 Արձանագրության 2.1 կետով կայացրած որոշմամբ մերժել է «Ռազովալո» ՍՊԸ-ի հայտը, միաժամանակ նույն արձանագրության 2.2 կետով փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրվել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/100 ընթացակարգի շրջանակներում 04.07.2018թ. ժամը 10:30-ին և 06.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն 06.06.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշմամբ «Ռազովալո» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.06.2018թ. և 18.06.2018թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***«Ռազովալո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 76 398 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռազովալո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11896-18 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի 28.06.2018թ. թիվ 1.1/2809-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես

նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում

լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն 06.06.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշմամբ «Ռազովալո» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 13.06.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ռազովալո» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.06.2018թ. և 18.06.2018թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***«Ռազովալո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 76 398 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռազովալո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.06.2018թ. և 18.06.2018թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***«Ռազովալո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է***

76 398 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն

ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11896-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05306478) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ռազովալո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ